

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՉԱՏԻՆՅԱՆ ԳԵՎՈՐԳ ԵՆՈՔԻ

ՀԱՅ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՄԻՏՔԸ ՕՍՄԱՆՅԱՆ ԲԱՐԵՆՈՐՈԳՉԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՄԱՍԻՆ
(1839-1876)

Է.00.01 «Հայոց պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների
թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր

ԵՐԵՎԱՆ - 2015

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում:

Գիտական ղեկավար՝

պ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ
Խառատյան Ա.Ա.

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

պատմական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր Ավագյան Ա.Գ.

պատմական գիտությունների թեկնածու,
դոցենտ Հովհաննիսյան Է.Գ.

Առաջատար կազմակերպություն՝

Երևանի պետական համալսարանի
Արևելագիտության ֆակուլտետ

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2015 թ. մայիսի 12-ին, ժամը 14⁰⁰-ին, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում գործող ԲՈՂ-ի Հայոց պատմության 004 մասնագիտական խորհրդում (հասցեն՝ 0019, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24/4):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2015 թ. ապրիլի 11-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,
պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ

Մուրադյան Հ. Ղ.

ԱՏԵՆԱՆՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

ԹԵՄԱՅԻ ԳԻՏԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՐԴԻՎԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ:

Օսմանյան բարենորոգչական շարժումը XIX դարի 40-ական թվականներից սկսած գրավել է հայ հասարակական մտքի և նրա մոտեցումներն արտահայտող պարբերական մամուլի ուշադրությունը: Այն վերոհիշյալ շարժման և հատկապես «նոր օսմանների» գաղափարախոսությունը գերազանցապես զնահատել է արևմտահայերի և՛ ազգային և՛ իրավական դրության տեսակետից: Ժամանակի օսմանյան ազատամիտ մամուլն ու հրապարակախոսներն արձագանքել են օսմանիզմի և «նոր օսմանների» դրույթներին, որոնք հետամտում էին ոչ մահմեդական հպատակների ծուլման և նրանց ազգային ինքնությունը մերժելու նպատակներ: Կարևորելով Օսմանյան կայսրության ամբողջականության խնդիրը՝ «նոր օսմանները» երկրի հարատևման երաշխիքները տեսնում էին միատարր մահմեդական հանրության հեռանկարում: Գր. Արծրունին, Յ. Պարոնյանը, Ստ. Ոսկանյանը, Կ. Ություճյանը և ուրիշներ ոչ միայն տեսնում էին թանգիմաթի անգործունակության բոլոր ապացույցներն իրականության մեջ, այլև օսմանյան սահմանադրությունը համարում էին թուրքերի կողմից մեծ տերություններին խաբելու և հպատակ ազգերին ապակողմնորոշելու միջոց:

Սույն թեմայի գիտական նշանակությունը և արդիականությունը պայմանավորված են, նախ նրանով, որ XIX դարի Օսմանյան թուրքիայի քաղաքական ու տնտեսական զարգացումների պատմությունը բազմաթիվ առնչություններ ունի ժամանակի հայոց պատմության, արևմտահայերի սոցիալ-իրավական ու քաղաքական դրության հետ: Թանգիմաթի և օսմանյան սահմանադրության (1876) նկատմամբ նշված հոսանքների վերաբերմունքի հստակ բացահայտումը նպաստում է նաև այդ հոսանքների գիտական ճանաչողությանը նոր կողմերով, որն ընդգրկում է ավելի քան երեք և կես տասնամյակ տևած մի ժամանակաշրջան (1839–1876):

Ատենախոսության թեման արդիական նշանակություն ունի օսմանյան բարենորոգչական շարժման նկատմամբ հայ մամուլի վերաբերմունքն ուսումնասիրելու տեսակետից՝ հատկապես մեր օրերում, երբ հրատապ նշանակություն է ստացել Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության քաղաքական հարաբերությունների խնդիրը:

ԱՏԵՆԱՆՈՍՈՒԹՅԱՆ ՆՊՍԱԿԱՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ: Այս ուսումնասիրության նպատակներն ու խնդիրներն են.

- Վերհանել XIX դարի 50-70-ական թթ. հայ պարբերական մամուլում դրսևորված հասարակական մտքի դիրքորոշումներն օսմանյան բարենորոգչական շարժման նկատմամբ՝ ըստ որոշակի հասարակական ուղղությունների և գիտականորեն արժեքավորել դրանց մոտեցումները նշված շարժմանը:

- Բացահայտել թանգիմաթի երկու փուլերի նկատմամբ հայ առաջատար հրատարակությունների հրապարակախոսական ու լրատվական անդրադարձները:

- Բացահայտել բարենորոգումների բովանդակությունը և համայնքների (միլիթներ) իրավաքաղաքական կացության համար դրանց ունեցած նշանակությունը:

- Ցույց տալ կայսրության ամբողջականության պահպանությանն ուղղված Բ. դեան, ինչպես և «նոր օսմանների» նպատակները:

• Ներկայացնել Օսմանյան Թուրքիայում միլիթները վերակառուցելու եվրոպական ծրագիրը և Բ. դեման այս հարցում ունեցած վերապահումների պատճառները:

• Տալ միլիթների ազգային Կանոնադրությունների ընդհանուր բնութագիրը:

• Ներկայացնել «նոր օսմանների հայեցողությունը» բարենորոգչական շարժման համատեքստում:

• Լուսաբանել թանգիմաթի և օսմանյան առաջին սահմանադրության (1876) անդրադարձը հայ հասարակական մտքի մեջ:

• Խնդրո առարկա հիմնահարցի շրջանակներում համադրել ու վերլուծել հայ հասարակական գործիչների տեսակետները:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՊԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹՆ ՈՒ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ: Ատենախոսության գիտական նորույթը կայանում է օսմանյան բարենորոգչական շարժման և «նոր օսմանների» գաղափարախոսության նկատմամբ ժամանակի հայ հասարակական մտքի գնահատման ամբողջական հետազոտության ու վերհաման մեջ: Հիմնահարցն այսպիսի լայն կտրվածքով երբևէ հատուկ ուսումնասիրության առարկա չի դարձել:

Նոր հայեցակետից են քննարկվում արևմտահայերի ազգային սահմանադրության հետ կապվող օսմանիզմի դրույթներին առնչվող հարցերը, ինչպես նաև միլիթների հանդեպ օսմանյան պետության ցուցաբերած վերաբերմունքի դրսևորումները: Հայ պատմաբանները մինչև այժմ քննարկել են արևմտահայերի սահմանադրությունը՝ հաշվի չառնելով մյուս միլիթների կանոնադրությունները (հույների և հրեաների), մեկուսի և կտրված դրանցից: Ատենախոսության մեջ առաջին անգամ, բնութագրվում են նաև հույն և հրեա համայնքների կանոնադրությունները և տրվում է դրանց համեմատական բնութագիրը ամբողջի համատեքստում:

Նորույթ պետք է համարել նաև այն եզրակացությունը, որ օսմանյան բարենորոգչական շարժման ծախողումը պայմանավորված էր այն անխուսափելիությամբ, որ օսմանյան իրականության մեջ եվրոպական սահմանադրական սկզբունքն ու իրավական, պետավարչական մոդելները չէին կարող գործել և պետք է վերածվեին իրենց հակադրությանը՝ ձևախեղվելով օսմանյան հասարակության բուն իսկ բնույթի թելադրանքով:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ

ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ

ՍԱՀՄԱՆՆԵՐԸ:

Ատենախոսությունն ընդգրկում է 1839–1876 թթ. ժամանակահատվածը: Այս ընթացքում Օսմանյան Թուրքիան, տեղի տալով եվրոպական տերությունների ճնշմանը, ստիպված էր անցկացնել բարենորոգումներ իրավունքի և պետական կառուցվածքի ու տնտեսության բնագավառներում: Թանգիմաթի (բարենորոգումների) երկու փուլերն ընդգրկում են 1839–1856 և 1856–1870-ական թթ. ժամանակահատվածները, ինչը հանգեցրեց 1876 թ. օսմանյան առաջին սահմանադրության ընդունմանը: Այդ սահմանադրության անգործունակությունը և իսպառ վերացումը Աբդուլ Համիդի կողմից նշանակում էր բարենորոգումների ավարտն Օսմանյան կայսրությունում: Նշված ժամանակագրական հենքի վրա էլ քննարկվում են հայ հասարակական մտքի դիրքորոշումները թանգիմաթի, «նոր օսմանների», հպատակ ազգերի կացության և օսմանյան սահմանադրության նկատմամբ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԸ:

Ատենախոսության մեթոդաբանական հիմքում ընկած են պատմահամեմատական,

պատմավերլուծական, պատմաքննական, փաստերի և իրադարձությունների հետադարձ (ռետրոսպեկտիվ) քննության մեթոդները:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԻՐԱՌԱՎԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ: Կարևորվում է աշխատանքի թեմատիկ արժեքը, ինչը կարող է նպաստել դրա հետագա մշակման գործին: Աշխատանքը կարող է օգտագործվել նաև ուսումնական նպատակներով, ինչպես դպրոցական, այնպես էլ բուհական ծրագրերում՝ հայ պարբերական մամուլի, բուն իսկ հասարակական հոսանքների արդիական գնահատման համար:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՓՈՐՉԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ: Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտական խորհրդում, քննարկվել և հրապարակային պաշտպանության է երաշխավորվել Պատմության ինստիտուտի Հայ պարբերական մամուլի և հասարակական-քաղաքական մտքի պատմության բաժնի կողմից: Ուսումնասիրության հիմնական դրույթները լուսաբանվել են հեղինակի հրատարակած հոդվածներում:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱՎԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՍՈՐՈՏ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ: Աշխատանքում օգտագործվել են տարաբնույթ աղբյուրներ և գրականություն: Առաջին անգամ գիտական շրջանառության մեջ են դրվել արխիվային համապատասխան վավերագրեր, օգտագործվել են անտիպ և տպագիր սկզբնաղբյուրներ, լրատվական ու հրապարակախոսական հրապարակումներ, հայերեն, ռուսերեն, անգլերեն, թուրքերեն լեզուներով համապատասխան պատմագիտական գրականություն: Օգտագործվել են փաստաթղթեր Երևանի Մ. Մաշտոցի անվ. Մատենադարանի, Ե. Չարենցի անվ. Գրականության և արվեստի թանգարանի, ինչպես և Հայաստանի Ազգային արխիվի ֆոնդերի նյութերից: Շրջանառության մեջ են դրվել սկզբնաղբյուրի արժեք ունեցող և միաժամանակ հետազոտության առարկա հանդիսացող ժամանակի հայ պարբերական մամուլի հրապարակումները:

Համապատասխան տարալեզու գրականության մեջ կան սույն ուսումնասիրությանն առնչվող կարևոր փաստեր, դիտարկումներ ու վերլուծություններ, որոնք նպաստել են ատենախոսության հետազոտական ընթացքին և եզրակացությունների հիմնավորմանը:

Օսմանյան բարենորոգչական շարժումը հայ հետազոտողներն ուսումնասիրել են XX դ. առաջին տասնամյակից: Ատոմի, Ե. Թոփչյանի և Սարուխանի մենագրություններում¹ ուշադրություն է դարձվել այդ շարժման քաղաքական նպատակներին:

Թանգհիմաթի գնահատականը ուշագրավ կողմերով է ներկայացնում խորհրդային պատմաբաններից Բ. Բորյանը²: Նա շեշտադրում է Թուրքիայի ներքաղաքական զարգացումների ընթացքը՝ այն լիովին կախվածության մեջ դնելով տերությունների նվաճողական քաղաքականությունից:

Հայ խորհրդային պատմագիտությունը հիմնահարցին լրջորեն անդրադարձավ ավելի ուշ՝ այն քննարկման առարկա դարձնելով մասամբ 1950-ական, իսկ հատկապես 1970–1980-ական թթ.: Ջ. Կիրակոսյանը «նոր օսմանների շեշտված ազգայնականության և այլազգի հպատակների հանդեպ նրանց

¹ Ատոմ, Բարենորոգումներու հարցը, Թիֆլիս, 1914: Թոփչյան Ե., Երիտասարդ Թուրքիան և հայերը, Թիֆլիս, 1909: Սարուխան, Հայկական խնդիրն և ազգային սահմանադրությունը Թուրքիայում, Թիֆլիս, 1912:

² Боръан Б., Армения, международная дипломатия и СССР, ч. I, М-JI, 1928.

թշնամական վերաբերմունքը դիտարկում է օսմանիզմի դրույթների հետ նրանց առնչությունների շրջանակներում³:

Արևմտահայերի սահմանադրությունը հիմնականում ազգային իրականության կտրվածքով են բնութագրել խորհրդային պատմաբաններ Ա. Յովհաննիսյանը, Մ. Ներսիսյանը, Յ. Ինճիկյանը, Յ. Ղազարյանը, Է. Կոստանդյանը և ուրիշներ⁴:

Հիմնահարցին առնչվում են Ռ. Սաֆրաստյանի մենագրական աշխատություններն ու հոդվածները⁵, որոնք հատկապես վերաբերում են թանգիմաթին, օսմանիզմի դրույթներին և «նոր օսմանների» շարժմանն ու նպատակադրման վերլուծությանը: Ռ. Սաֆրաստյանը ցույց է տալիս այդ նպատակադրման երկու բնութագրական կողմերը՝ կայսրության պահպանման սևեռուն գաղափարը և թշնամական վերաբերմունքը դրան սպառնացող հպատակ ազգերի շարժումների նկատմամբ: Հենց այս գաղափարախոսությունը պետք է վերածվեր հայերի ցեղասպանությունը հիմնավորող ու նախապատրաստող պետական ծրագրի:

Ա. Խառատյանի աշխատություններում⁶ արևմտահայ կյանքի իրողությունները գնահատվում են Օսմանյան թուրքիայի քաղաքական, իրավական ու տնտեսական հենքի վրա:

Մեզ հետաքրքրող խնդիրներն այս կամ այն չափով շոշափված են Ա. Ալպոյաճյանի, Յ.Գ. Սիրունու, Լ. Չորմիսյանի և սփյուռքահայ այլ հետազոտողների աշխատություններում⁷: Օսմանյան բարենորոգչական

³ Կիրակոսյան Ջ., Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը (XIX դարի 70-ական թթ.), Ե., 1978:

⁴ Յովհաննիսյան Ա., Նալբանդյանը և նրա ժամանակը, հ. 1, Ե., 1955: Ներսիսյան Մ., Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ (1850–1900), Ե., 2002: Ինճիկյան Յ., Օսմանյան կայսրության անկումը, Ե., 1984: Ղազարյան Յ., Արևմտահայերի սոցիալ-տնտեսական և քաղաքական կացությունը 1800–1870 թթ., Ե., 1967: Կոստանդյան Է., Սկրտիչ խրիմյան, հասարակական-քաղաքական գործունեությունը, Ե., 2000:

⁵ Сафрастян Р., Доктрина османизма в политической жизни Османской империи (50–70 гг. XIX в.), Е. 1985. Նույնի, Օսմանյան կայսրություն, Ցեղասպանություն ծրագրի ծագումնաբանությունը (1876–1920 թթ.), Ե., 2009: Նույնի, Армянские либералы и конституционное движение в Османской империи 1867–1876 гг., Страны и народы Ближнего и Среднего Востока, XX. ИВ НАН РА, Е., 1999, с. 125–142. Թուրքական իշխանությունների հակազդեցությունը 1876 թ. բուլղարական ապստամբությանը, նոր մտտեցում: – Արևելագիտական ժողովածու, հ. V, 2004, էջ 310–318: Նախացեղասպանություն (Proto-Genocide), տեսության և պատմության խնդիրներ (Օսմանյան կայսրության օրինակով), – Պատմագիտական և օսմանագիտական հետազոտություններ III, ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ: Ե., Լուսաբաց, 2005, էջ 26–47: Ottoman Policy towards Christians during Tanzimat: New Tendencies. Turcic and Ottoman Studies, V., Institute of Oriental Studies, Armenian National Academy of Sciences, Yerevan, 2008, 56–72 p.p.

⁶ Խառատյան Ա., Արևմտահայ մամուլը և գրաքննությունը Օսմանյան թուրքիայում, Ե., 1989: Հասարակական միտքը Չմուռնիայի հայ պարբերական մամուլում (1840–1900), Ե., 1995: Արևմտահայերի Ազգային «սահմանադրությունը» (1860–1863), «Պատմաբանասիրական հանդես», 1992, № 2–3, էջ 51–66: Դարձյալ արևմտահայերի Ազգային սահմանադրության մասին: Նույն տեղում, 2008, № 2, էջ 81–93: Օսմանյան սահմանադրությունը հայ հասարակական մտքի գնահատմամբ: Նույն տեղում, 1981, № 4, էջ 109–124:

⁷ Ալպոյաճյան Ա., Ազգային սահմանադրությունը: Իր ծագումը և կիրառությունը: «Ընդարձակ օրացույց և Փրկչի հիվանդանոցի հայոց», Կ. Պոլիս, 1910: Սիրունի Յ. Գ., Պոլիս և իր դերը,

շարժումը նրանք գնատատում են թուրքիան բարենորոգելու հասունացած ահրաժեշտության տեսակետից՝ եվրոպական քաղաքականության պարտադրիչ ազդեցության պայմաններում:

Ռուս խորհրդային պատմագիտության մեջ հիմնահարցը գնահատվել է հայեցակարգային միօրինակությամբ, բայց և բազմակողմանորեն: Դրանց մեջ առանձնանում են Ա.Ֆ. Միլլերի, Ա.Դ. Նովիչևի, Ա.Դ. ժելտյակովի, Յու.Ա. Պետրոսյանի, Վ.Ա. Խվյատովի, Ի.Ե. Ֆադեևայի, Ի.Լ. Ֆադեևայի և այլոց աշխատությունները⁸: Այս պատմաբանները Օսմանյան թուրքիայի անկման պատճառների մեջ ընդգծում են արևմտյան տերությունների իմպերիալիստական էքսպանսիայի գործոնը: Նրանք այդ երկրների խմբից փաստորեն հեռու են պահում Ռուսաստանը՝ անտեսելով նրա ոչ նվազ նվաճողական քաղաքականությունը թուրքիայի նկատմամբ: Նշված պատմագիտական գրականության մեջ բարենորոգչական շարժումը գնահատվում է իբրև առաջադիմական երևույթ, սակայն և քիչ արդյունավետ, որպես թերի և պակասավոր բարեփոխումների շարք:

Ա.Դ. Նովիչևն արդեն որոշ վերապահումներով առաջադիմական երևույթ է համարում թանգիմաթը, «նոր օսմաններին» ու նրանց սահմանադրությունը: Սակայն նա կրկնում է Ա.Ֆ. Միլլերի դրույթն այն մասին, որ 1839-ի և 1856-ի հաթթերը միմյանցից տարբերվում են նրանով, որ առաջինը թուրք բարենորոգիչների նախաձեռնության արդյունքն էր, մինչդեռ երկրորդը մշակել էին տերությունները՝ պարտադրել Բ. դռանը: Սենք կարծում ենք, որ 1839-ի հաթթը ևս եվրոպական քաղաքական ազդեցության արդյունքն էր և ոչ թե զուտ թուրքական քաղաքականության զարգացումների դրսևորումը:

Ռուս խորհրդային պատմագիտության մեջ պետք է առանձնացնել Յու.Ա. Պետրոսյանի, Ա.Դ. ժելտյակովի և Ի.Լ. Ֆադեևայի վերոհիշյալ աշխատությունները, որոնք ամնիջականորեն առնչվում են սույն ուսումնասիրությանը: Առաջինը ելնում է այն դիրքերից, որ «նոր օսմանների» շարժումը չէր շոշափում ֆեոդալական կարգերի հիմքերը, բայց հետամտում էր ապահովել երկրի տնտեսական ու մտավոր առաջընթացը: Յու. Պետրոսյանի զույգ աշխատություններն էլ ակնհայտ արժեքներ ունեն այդ շարժման բնութագրական կողմերի վերհանման գործում (բացահայտ շովինիզմը, պատկառանքը իսլամական դոգմաների հանդեպ և օսմանիզմի ձուլման նպատակների պաշտպանությունը): Սակայն թուրքիայի տնտեսության (հիմնականում ավատատիրական) բուրժուականացման գործընթացը ամեն կերպ ընդգծելու ճիգը զգացնել է տալիս նրա հայեցակարգերում:

Հիմնահարցը ինքնատիպ վերլուծության է ենթարկվել Ի.Լ. Ֆադեևայի աշխատության մեջ: Հպատակ միլեթների ազգային կանոնադրությունների մեջ

h. 3, Անթիլիաս, 1987, h. 4, 1988: Թանգիմաթ և հայեր – «Պատմա-բանասիրական հանդես», 1966, № 4, էջ 53–66: Չորմիսյան Լ., Համապատկեր արևմտահայոց մեկ դարու պատմության, h. Ա, 1850–1878, Բեյրութ, 1972:

⁸ Миллер А.Ф., Краткая история Турции, М., 1948. Новичев А.Д., История Турции III. Новое время, ч. II (1839–1853), Л., 1973. История Турции. IV. ч. III (1853–1875), М., 1978. Желтяков А.Д., Печать в общественно-политической и культурной жизни Турции (1729–1908), М., 1972. Петросян Ю.А., “Новые османы” и борьба за конституцию 1876 г. в Турции, М., 1958. Его же; Младотурецкое движение, М., 1971. История дипломатии, т. 2 (автор тома Хвостов В.М.) М., 1963. Фадеева И.Е., Мидхат-паша. Жизнь и деятельность, М., 1977. Фадеева И.Л., Официальные доктрины в идеологии и политике Османской империи (османизм-панисламизм). XIX –начало XX в. М., 1985.

այս հեղինակը վերհանում է օսմանիզմի բացահայտ նպատակը՝ միլեթների ազգային վարչությունների աշխարհիկ կառույցների ամրապնդումը (իրականում օսմանյան պետության լիակատար վերահսկողության հաստատումը այդ կառույցներում) ի հաշիվ հոգևոր կառույցների ազդեցության էական նվազեցման:

Թուրքական պատմագիտությունը «նոր օսմանների» և Միդհատ փաշայի գործունեությունն ի սկզբանե գնահատել է որպես առաջադիմական երևույթ, միաժամանակ անտեսելով ոչ մահմեդական հպատակների հանդեպ նրանց խտրական վերաբերմունքը: Ալի Չայդար Միդհատ բեյի աշխատության մեջ Միդհատ փաշայի և օսմանյան վերնախավի հակադրությունը առավել հենվում է անձնական փոխհարաբերությունների, քան քաղաքական հակասությունների վրա⁹:

Չետագայի թուրք պատմաբանները պահպանելով բարենորոգչական շարժման հանդեպ դրական վերաբերմունքը, այդ փորձում են հիմնավորել քաղաքական իրողությունների վերլուծությամբ՝ հիմնականում մնալով անքննադատ դիրքորոշման սահմաններում: Մ. Կափլանի, Ն. Բերկեսի, Շ. Քյուրդադեյլի, Մ. Քունթայի, Է. Քարալի, Ս. Քոչաչի, Է. Ուրասի, Չյուսեին Նազըմ փաշայի¹⁰ և այլոց աշխատություններն արտահայտում են թուրքական պաշտոնական պատմագիտության ժխտական հայեցակետը հպատակ աշխտավանների, այդ թվում և հայերի ազգային շարժումների հանդեպ: Այդպիսիք նրանք համարում են «երախտամոռություն», դրսի հրահրումների արդյունք՝ հակառակ այն «հայրախնամ հոգածության», որով, իբր, նրանց շրջապատել էր օսմանյան պետությունը:

Արևմտյան տեսություններով պնդված որոշ թուրք պատմաբաններ՝ Ք. Կարպատը, Շ. Մարդինը, Դ. Ավջիօղլուն և ուրիշներ բարենորոգչական շարժումը դարձնում են միջոց՝ ցույց տալու «եվրոպական իմպերիալիզմի» խարդավանքները Թուրքիայի նկատմամբ¹¹:

Թուրքական պատմագիտության մեջ նկատելի է Օսմանյան կայսրության վերջին հարյուրամյակի պատմության «դեմոկրատացման» գործընթացի միտումը: Օսմանյան բարենորոգչական շարժման տարբեր կողմերի վերհանումով հանդերձ, թուրքական արդի պատմաբանները, որոշ բացառություններով, համակարծիք են Օսմանյան Թուրքիայում ոչ մահմեդականների իրավունքների զուեմագաղղման, նրանց հարստահարումներն ու իրավազրկությունը քողարկելու հարցում¹²:

⁹ Ali Haydar Midhat bey. The Life of Midhat Pasha. New York, 1973, p. 292.

¹⁰ Kaplan M. Namık Kemal. Hayatı ve Eserleri, İstanbul, 1948. Berkes N. The Development Secularizm in Turkey, Montreal, 1964, p. 517. Kürdükül Ş. Şairler ve Yazarlar Sözlüğü, Ankara, 1973, s. 470. Kuntay M. Namık Kemal, Devrinin İnsanları ve Olayları arasında. Kis. I-II, İstanbul, 1949, 1956. Karal E.Z. Osmanlı Tarihi, c. VIII, Ankara, 1956, c. VIII, Ankara, 1962. Koças S. Tarih Boyunca Ermeniler ve Selçuktan beri Türk-Ermeni İlişkileri, Ankara, 1970. E.Uras Tarihte Ermeniler ve Ermeni Meselesi, Ankara, 1950. Hüsein Nazım Paşa. Ermeni Olayları Tarihi, Kis. I-V, Ankara, 1994.

¹¹ Karpat K. Introduction. In: The Ottoman State and its Place in Word History. Leiden, 1974, Avcioğlu D., Türkiyenin Düzeni (Dün, Bugün, Yarın) Ankara, 1968, Թուրք պատմաբանների տեսակետներին քննադատաբար անդրադարձած պատմաբաններից տե՛ս նաև Барсукова О.Б., Шувалова Н.Б., Изучение новой и новейшей истории в университетах США. «Народы Азии и Африки», 1977, № 4, с. 208–212. Խաղաղյան Ա., Թանգիմաթը և ազգային սահմանադրությունը թուրքական պատմագիտության մեկնաբանությամբ: «Մանավազության և հոգեբանության հիմնախնդիրներ», Ե., 2011, № 2, էջ 174–179:

¹² Çavdar T. Türkiye'nin Demokrasi Tarihi 1839–1950. Imge Kitabevi Yayınları, İstanbul, s. 29–32, Kaya O. Tanzimat'tan Lozan'a Azınlıklar. Yeditepe Yayınevi, İstanbul, 2004, s. 29–32.

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ՈՒ ԲՈՎԱՆՊԱԿՈՒԹՅՈՒՆԸ:

Ատենախոսությունը կազմված է ներածությունից, երեք գլխից, որոնք բաժանվում են ենթագլուխների, եզրակացությունից, օգտագործված աղբյուրների և գրականության ցանկից:

Ներածությունում բացահայտվում են ատենախոսության թեմայի արդիականությունը, նպատակներն ու խնդիրները, ներկայացվում են աշխատանքի մեթոդաբանական հիմքը և գիտական նորույթը, թեմայի ժամանակագրական սահմանները, հիմնավորվում է աշխատանքի կիրառական նշանակությունը, տրվում է աղբյուրների և գրականության տեսությունը:

Առաջին գլուխը՝ «Բարենորոգումները Օսմանյան թուրքիայում» բաղկացած է երկու ենթագլուխներից՝ «Բարենորոգումների երկու փուլերը» և «Համայնքների ազգային կանոնադրությունները»:

Առաջին ենթագլխում ներկայացվում են բարեփոխումների անհրաժեշտությունը Օսմանյան թուրքիայում, թանգիմաթի բովանդակային և ժամանակագրական երկու փուլերը (հաթթը շերիֆը՝ 1839–1856 և հաթթը հյումայունը՝ 1856–1876), ինչպես նաև արտաքին ու ներքին այն գործոնների ազդեցությունը, ինչն ստիպում էր իշխանություններին ուղիներ փնտրել, մի կողմից եվրոպական էքսպանսիայի, մյուս կողմից ներքին հակադրություններին դիմակայելու համար:

Երկրորդ ենթագլխում ներկայացվում են հպատակ այլադավան համայնքների ներսում կատարված տնտեսական և հոգևոր տեղաշարժերը, բարենորոգումների եվրոպական մոդելի ընդօրինակման փորձերը թուրքերի կողմից, ինչն էլ հանգեցրեց միլիթների (համայնքների) վերակառուցման գործընթացին: 1856 թ. փետրվարի 6-ի հաթթը հյումայունը համայնքների վարչական վերածնանն իր դրույթներով, շարունակում էր միլիթների ապակենտրոնացման և դրանցում աշխարհիկ սկզբունքների իրականացման գործընթացը, որի արդյունքում էլ ընդունվեցին արևմտահայերի (1860), հույն պատրիարքության (1862) և հրեական համայնքի (1865) կանոնադրությունները: Այնուհետև մանրամասնորեն քննարկվում են արևմտահայերի 1860 և 1863 թթ. (չվավերացված և վավերացված) Ազգային սահմանադրությունը (Կանոնադրություն), հույն պատրիարքության և հրեական համայնքի կանոնադրությունները, իրավական կառուցվածքը և տարվում են դրանց համեմատական զուգահեռները: Այնուհետև եզրակացվում է, որ այնուամենայնիվ կրոնական գլուխները պահպանել էին համայնքի ղեկավարի կարգավիճակը՝ հակառակ օսմանիզմի ջատագովների ջանքերի: Իսկ աշխարհիկ սկզբունքի համապատասխան կառույցների գործառույթները նպաստեցին հպատակների (մասնավորապես՝ հայերի) ազգային ինքնագիտակցության զարգացմանը, մշակույթի ծավալմանը և քաղաքացիական դիրքորոշումներում ազգային տեսակետի ամրապնդմանը:

Այս ենթագլխում ներկայացված են նաև հայոց եկեղեցու և մտավորականության տարակարծությունները մամուլում (Մեղու», «Արևելյան դար», «Մասիս», «Մյունստի-ի էրճիաս», «Արևմուտք» և այլն), որտեղ ընդհանուր առմամբ հայ հասարակական միտքը կասկածանք է տածում թուրքիայում սահմանադրական զաղափարների իրականացման նկատմամբ, իսկ որոշ դեպքերում, հատկապես արևելահայ ազատամիտ մամուլի էջերում, կտրականապես հերքվում է սահմանադրություն հաստատելու հնարավորությունը:

Ատենախոսության երկրորդ գլուխը՝ «Նոր օսմանների» հայեցողությունը» բաղկացած է երկու ենթագլուխներից՝ «Օսմանյան կայսրության բարենորոգման հիմնահարցը» և «Ընդդեմ հպատակ ժողովուրդների ազգային ինքնորոշման»:

Առաջին ենթագլխում ներկայացվում են այն միջոցառումները («Չողի մասին օրենքը», նոր քրեական և առևտրական դատավարական օրենսգրքերի ընդունումը, «Վիլայեթների մասին օրենքը», քաղաքացիական օրենսգրքի ընդունումը և այլն), որոնք կրում էին եվրոպական իրավունքի ազդեցությունը, սակայն բխում էին շարիաթի և Ղուրանի դոգմաներից և վկայում էին թանգիմաթի ջատագովների պահպանողական գործելակերպի մասին:

Բարեփոխումները վերաբերում էին նաև թուրքիայի մշակութային կյանքին. 1861 թ. կայսրության պատմության մեջ առաջին անգամ բացվեց գիտական կենտրոն՝ «Էնջյունենի դանիշը» («խորհրդակցական մարմին»), որը փակվեց 1862-ին: Նույն 1862 թ. հիմնվեց Օսմանյան գիտական ընկերություն, որը հրատարակում էր իր հանդեսը: Արևելյան տիպի գրական երկերի կողքին սկսեցին երևալ նոր ոճի ստեղծագործություններ և այլ հրապարակումներ: Ենթագլխում ցույց է տրվում, որ «նոր օսմանները» կողմ էին կայսրության ամբողջականության պահպանմանը և թուրք տարրը մշտապես վեր էին դասում հպատակ մյուս ժողովուրդներից, հատկապես՝ ոչ մահմեդականներից: Նրանք բոլորն էլ համամիտ էին կայսրությունը պահպանելու և թուրք տարրի գերակայության խնդրում:

Միջազգային հարաբերություններում «նոր օսմանները» հույսեր էին կապում սահմանադրության հետ, որովհետև կարծում էին, որ սահմանադրության հռչակումից հետո օսմանյան կայսրությունը եվրոպայի հետ իր հարաբերությունները կկարգավորի լրիվ իրավահավասարության դիրքերից: Սահմանադրության ընդունումը «նոր օսմանները» նույնիսկ համարում էին «Արևելյան հարցի» ամենաճշմարիտ լուծում, որը, իբր, այլահավաստներին մերձեցնելու էր տիրող թուրքական տարրին և իրավական հիմք էր նախապատրաստելու վերջինիս հետ նրանց ձուլման համար:

1876 թ. դեկտեմբերի 23-ին, արդեն Աբդուլ Համիդի գահ բարձրանալուց հետո, թուրքիայի պատմության մեջ առաջին անգամ, ընդունվեց Օսմանյան սահմանադրությունը: Այն երաշխավորում էր կայսրության բոլոր հպատակների անձնական ազատություն և իրավահավասարություն: Մի շարք ազատությունների թվում հռչակվում էր նաև մամուլի ազատություն:

Օսմանյան սահմանադրությունը մի քայլ առաջ էր թուրքական կղերավատատիրական կարգերի համեմատ և խթանում էր օսմանահպատակների գիտակցական մակարդակը դեպի ազատականություն: Մյուս կողմից, թուրքիան դեռ պատրաստ չէր սահմանադրական միապետության անցնելուն, այդ պատճառով էլ Օսմանյան սահմանադրությունը ի սկզբանե դատապարտված էր ձախողման:

Երկրորդ գլխի երկրորդ ենթագլուխը ներկայացնում է նախասահմանադրական ու հետսահմանադրական այն մթնոլորտը, երբ թուրք վերնախավն ու ձևավորման փուլում գտնվող թուրքական ազգային բուրժուազիան իրենց բոլոր կարելիություններով ընդդիմանում էին հպատակ ժողովուրդների ազգային ինքնորոշման գաղափարին: Օսմանյան գործիչները հավատարիմ էին մնում հպատակ ազգերին թուրքերի հետ ձուլման իրենց հայեցակարգին: Միայն այդ միջոցով էին թուրք բարենորոգիչները և սահմանադրականները ձգտում պահպանել կայսրության ամբողջականությունը: «Օսմանլը» (օսմանցի) տերմինը նշանակում էր քաղաքացիության վերազգային

ձևակերպում, որն ուղղված էր հպատակ ժողովուրդների ինքնորոշման ձգտումների դեմ: Փաստորեն այս հիմքի վրա «ճոր օսմանների» գաղափարական դրույթները վերաճեցին պանթուրքիզմի (համաթրքության) առավել անհանդուրժող գաղափարախոսության, որը փորձում էր հպատակ ազգերին զրկել իրենց ազգային ինքնությունից և թուրքացնել նրանց: Նշանակում է «օսմանըլըքը» (օսմանցիություն) ոչ այլ ինչ էր, եթե ոչ պանօսմանիզմի (համօսմանության) մեկնակետ, իսկ «ճոր օսմանները» դրա գաղափարական հիմնադիրները:

Դատապարտելով հպատակ ժողովուրդների ազատագրական ձգտումները՝ թուրք սահմանադրականները կասեցնում էին այլադավանների ըմբոստացման հնարավորությունները վարչակարգի դեմ: Այդ էր պատճառը, որ հայ հասարակական միտքը հիմնականում բացասաբար էր տրամադրված «ճոր օսմանների» գաղափարախոսության նկատմամբ:

Իր հերթին սուլթան Աբդուլ Յամիդը սահմանադրությունն ընկալում էր իբրև դիվանագիտական միջոց, որով ձգտում էր մի կողմից խաբել Եվրոպային, մյուս կողմից ստանալ թուրք սահմանադրականների բարեհաճությունը՝ մինչև կգային իր ինքնակալությունն ամրապնդող նպաստավոր ժամանակներ:

Ատենախոսության երրորդ գլուխը՝ «Նոր օսմանների» գնահատականը հայ իրականության մեջ» վերնագրով, բաղկացած է երկու ենթագլխից՝ «Նոր օսմանները» և հայ հասարակական միտքը» և «Օսմանյան սահմանադրության գնահատականը»:

Առաջին ենթագլուխը ներկայացնում է հայ հասարակական մտքի երկու հիմնական մոտեցումները «ճոր օսմանների» շարժմանը, ցույց է տրվում, որ այդ մոտեցումները բխել են արևմտահայության կացությունը բարվոքելու անտահոգությունից: Յատկապես 1870-ական թթ. հայ հասարակական գործիչներն անդրադարձել են օսմանիզմի դրույթներին և բացահայտել են «ճոր օսմանների» ձգտումները՝ այլահավատ հպատակներին ձուլելու, նրանց ինքնորոշման իրավունքը ժխտելու և կայսրության ամբողջականությունը պահպանելու ուղղությամբ: «Մասիսի» էջերում *Ծերենցը* (Հ. Շիշմանյան) իր համակրանքն է արտահայտել Թուրքիայում սահմանադրական միապետության հաստատելու գաղափարին, սակայն բացասաբար է անդրադարձել մյուս ազգերի նկատմամբ թուրք տարրի գերազանցության վերաբերյալ օսմանիզմի գաղափարական պատկերացումներին: *Միսակ* ստորագրողը մամուլի և քաղաքացիական պաշտությունները ածանցում է պետության կառավարման ձևից և կողմ է արտահայտվում պատրիարքական իշխանությանը և դրա հեղինակությունը պահպանելու սկզբունքին: Դա բանավեճ էր եկեղեցու և կղերի ազդեցության թուլացմանն ուղղված «ճոր օսմանների» դրույթների դեմ:

«Մշակի» էջերում Գր. Արծրունին օսմանյան սահմանադրության քննադատությունը համադրում է «ճոր օսմանների» գաղափարախոսության բնութագրական կողմերին և բացահայտում է նրանց հեղինակական պատկերացումները եվրոպական պաշլամենտարիզմի և միջնադարյան դոգմաների անհեռանկար խառնուրդի մասին:

Խնդրին այլ մեկնակետից էր մոտենում «Փորձ» պահպանողական հանդեսը: «Փորձը» մի կողմից համակրանքով էր վերաբերվում սահմանադրություն կիրառելու «ճոր օսմանների» ջանքերին, մյուս կողմից առարկում էր նրանց շովինիստական դիրքորոշմանը: «Փորձն» առաջարկում էր կրոնական հանրային իրավունքի փոխարեն կիրառել քաղաքացիական օրենսդրություն, մահմեդական գործի փոխարեն ստեղծել բոլոր հպատակներից

կազմված գործ, պետական պաշտոնների մեջ ընդգրկել «բոլոր ցեղերի ու դավանանքի մարդկանց»:

Պահպանողական «Մեղու Հայաստանի» թերթը ևս պատրանքներ ուներ սահմանադրությունից:

«Թատրոնի» էջերում Հ. Պարոնյանը երգիծել է «օսմանցիության» և թուրքերեն լեզվի վերաբերյալ «նոր օսմանների» դրույթները, Թուրքիայի պատմական անցյալը գունազարդելու նրանց ճիգերը և առաջ քաշած «իրավունք» և «ազատություն» կարգախոսները, որ բոլորովին կապ չունեին թուրքական իրականությանը հատուկ բռնությունների և խտրականության հետ:

Հայ հասարակական միտքը «նոր օսմանների» շարժմանը մոտեցել է նաև օսմանյան առաջին սահմանադրության ու խորհրդարանի գործունեության առթիվ: Հայ ազատամիտները, բացահայտելով «նոր օսմանների» գաղափարախոսության հետադեմ բնույթը և հաշվի առնելով թուրքական իրականությունը, հիմնականում չէին հավատում Օսմանյան կայսրության սահմանադրվելու հնարավորությանը, իսկ պահպանողականները հույսեր էին կապում Թուրքիայում բարեկարգումներ մտցնելու և սահմանադրություն կիրառելու «նոր օսմանների» ջանքերի հետ:

Երրորդ գլխի երկրորդ ենթագլուխը ներկայացնում է օսմանյան սահմանադրության գնահատականը՝ հայ հասարակական մտքի կողմից: Այն իր արտահայտությունն է գտել ժամանակի հայ պարբերական մամուլի էջերում:

Ընդհանուր առմամբ, «Մասիսը» համակրանքով էր գնահատում սահմանադրության կիրառումը երկրում, սակայն հերքում էր թուրքական ծայրահեղ հետադիմականների այն կարծիքը, թե, իբր, սահմանադրության կիրառման իրողությունը ձեռնտու է միայն ոչ մահմեդական հպատակներին: «Մասիսն» իր էջերում ընդարձակ տեղեկություններ է հաղորդել հարստահարությունների և ապօրինությունների մասին և համամտություն է հայտնել «Մշակի» գաղափարական դիրքորոշումներին:

«Թատրոնի էջերում Հ. Պարոնյանը ցույց է տալիս, որ օսմանյան սահմանադրությունը չի կողո գործունակ լինել, քանի դեռ մազաչափ անգամ չեն նվազել հարստահարություններն ու իրավազրկությունը:

«Փունջը», «Լրագիրը», «Արշալույս արարատյանը» և այլ պահպանողական հրատարակություններ սահմանադրության կիրառման ձախողումը, Միդհատի արտաբռումը և այլ հանգամանքներ բացատրում էին սուլթանի, Միդհատի և բարձրաստիճան պաշտոնյաների անձնական հարաբերությունների սրումով, իսկ սահմանադրության ու խորհրդարանի գործունեության կասեցումը բացատրում էին միայն պաշտոնական տեսակետի շրջանակներում:

Արևելահայ հրատարակությունների մեջ օսմանյան սահմանադրությանը առավել ուշադրություն է դարձրել ազատամիտ «Մշակը»: 1870-ականների 2-րդ կեսի իրադարձությունների ֆոնի վրա հստակ ուրվագծվում էին թե՛ եվրոպական մի շարք երկրների, թե՛ Ռուսաստանի նվաճողական նկրտումները, ինչը վկայում էր, որ Թուրքիայի եվրոպականացման գաղափարը ձախողվել է: Հենց այս հանգամանքից էլ ելնելով՝ Գր.Արծրունին և Րաֆֆին «Մշակի» էջերում օսմանյան սահմանադրությունը գնահատում էին իբրև ձևականություն: Խոսելով այլադավանների տարրական, իրավունքների ոտնահարման մասին՝ Գր. Արծրունին և Րաֆֆին իրենց ժխտական վերաբերմունքն էին արտահայտում օսմանյան սահմանադրության նկատմամբ և իրական էին համարում (հատկապես

1877–78 թթ.) Արևմտահայաստանի ազատագրումը և ինքնավարություն ստանալու գաղափարը Ռուսաստանի աջակցությամբ:

4. Պոլսի «Լույսը» շեշտադրում էր սահմանադրության հռչակագրային բնույթը և դրա գործադրման երաշխիքների բացակայությունը օսմանյան պետության մեջ:

Մյուս պահպանողական հրատարակությունների նման «Մեղու Հայաստանին» նույնպես սահմանադրականների և Միդիաստի պարտությունը բացատրում էր զուտ իրադարձությունների ընթացքով:

Արևելահայ ազատամիտները բացահայտել են օսմանյան բարենորոգչական շարժման և սահմանադրության քողարկված նպատակներն ու ձևական բնույթը, այդ պատճառով էլ սուր քննադատության են ենթարկել թե՛ սահմանադրականներին, թե՛ թուրքական իշխանություններին: Նրանք հայ երեսփոխանական խմբակցության և «քաջասիրտ խմբագիրների ու ժողովրդի» կեցվածքը գնահատել են դրական ու խարազանել են ծախված էֆենդիական դասը:

Արևմտահայ ազատամիտները շատ ավելի զուսպ էին օսմանյան խորհրդարանի գնահատման հարցում առավել լայնախոհություն ցուցաբերելով Բ. դեմ հանդես քննադատական կեցվածքին:

Ժամանակի հայ պահպանողական միտքը («Փունջ», «Լույս», «Արշալույս արարատյան», «Մեղու Հայաստանի»), թեև առանձին վերապահումներով, հավատում էր թուրքիայի սահմանադրվելուն և բարեկարգվելուն, այդ պատճառով էլ հույսեր էր կապում օսմանյան առաջին սահմանադրության հետ և այն գնահատում էր որպես դրական և առաջադիմական քայլ:

Ամփոփելով աշխատանքի ընդհանրացումներն ու դրույթները՝ կարելի է հանգել հետևյալ եզրակացությունների.

19-րդ դարի առաջին կեսից Օսմանյան կայսրության համար անհրաժեշտություն էր դարձել երկրի կառավարման արդիականացումը՝ վերից վար և կյանքի բոլոր բնագավառներում: Ուստի, կայսրությունը փրկելու համար, իշխանությունները ձեռնամուխ եղան բարենորոգչական միջոցառումների, ինչը խրախուսվում էր եվրոպական տերությունների կողմից: Նոր ձևավորվող թուրք ազգային բուժուսագիտի իր հերթին ձգտում էր բարենորոգումների միջոցով կայսրությունը վերածել սահմանադրական միապետության և հասնել որոշակի իրավունքների:

Թուրքական իշխանությունները, ինչպես և «նոր օսմանները», ձգտում էին բարենորոգումների միջոցով կասեցնել այլազգի հպատակների ազատագրական շարժումները, սահմանադրական ճանապարհով ուժացնել նրանց բոլորին և միատարր զանգված ստեղծելու հեռանկարում փրկել կայսրությունը կործանումից: Այդ էր պատճառը, որ 1839 թ. հռչակված թանգիմաթի սկզբունքները պարարտ հող չգտան երկրում հատկապես իսլամի և թուրք տարրի դիմադրության պայմաններում: Ընդունված քրեական և առևտրական, քաղաքացիական ու վարչական օրենքները, ինչ-որ չափով հնարավորություն տվեցին հպատակ այլադավաններին բավարարել իրենց մշակութային, լուսավորական պահանջները: Սակայն օսմանյան հանրային կարծիքի ժխտական վերաբերմունքը թանգիմաթի դրույթների նկատմամբ (հատկապես բոլոր հպատակների իրավահավասարության հարցում), պայմանավորեցին բարեկարգումների ձախողումը երկրում:

Թանգիմաթի երկրորդ փուլում, հաթթը հյունայունի (1856) ուժով հպատակ այլազգիների՝ հայերի, հույների և հրեական համայնքների կյանքում

կարևորություն ստացան նրանց ազգային կանոնադրությունները: Դրանք չունեին քաղաքական որևէ արժեք և ընդամենը կարգավորում էին ներհամայնքային վարչական, հոգևոր-մշակութային և տեղական բնույթի որոշ հարցեր: Միլեթների աշխարհականացումը, որ ուղղված էր այլազգիների հոգևոր հիմնարկների դեմ, հույսեր էր ներշնչում օսմանիզմի ջատագովներին՝ արագացնելու այլադավանների ծուլումը թուրքերի մեջ: Սակայն տեղի ունեցավ հակառակը, աշխարհիկ սկզբի ընդլայնումը ազգային վարչություններում նպաստեց ինքնորոշման տրամադրությունների խորացմանը միլեթների ներսում: Արևմտահայ դեմոկրատական ուժերի և վերնախավի միջև ընթացող պայքարի արդյունքում խմբագրված կանոնադրության մոր տեքստը նույնպես չունեք քաղաքական որևէ մշանակություն, սակայն պահպանում էր կրոնական առաջնորդի ազգի գլուխ լինելու կարգավիճակը: Նմանատիպ վիճակներ էին արտահայտում նաև հույների և հրեաների կանոնադրությունները: Կարծում ենք, որ մյուս միլեթների համեմատությամբ, հայերի կանոնադրությունը (Ազգային սահմանադրություն) ուներ առավել քան աշխարհիկ քաղաքացիական բնույթ:

«Նոր օսմանները» հանդես եկան տեսական այնպիսի դրույթներով, որ օսմանցիության դոկտրինան ստացավ թշնամական ուղղվածություն հպատակ ազգերի ինքնորոշման ցանկացած դրսևորման դեմ: Նրանք քարոզում էին թուրքերի անվերապահ գերակայությունը այլազգիների հանդեպ, կայսրության ամբողջականության և անվտանգության ապահովում և բոլոր հպատակների թուրքացում: Նրանց փայփայած սահմանադրությունը նույնպես ուներ զուտ քաղաքական ծագումնաբանություն և բխում էր ոչ թե երկրի զարգացման օրինաչափություններից, այլ կայսրությունը պահպանելու և թուրք տարրի գերիշխանությունը հավերժացնելու մտայնությունից: Այդ նկատի առնելով, հայ հասարակական միտքը հիմնականում բացասաբար էր տրամադրված «ճոր օսմանների» գաղափարախոսության և օսմանյան առաջին սահմանադրության նկատմամբ: Ընդ որում, արևելահայ հասարակական մտքի ներկայացուցիչները իրենց ժխտական դիրքորոշումն արտահայտել են առավել կտրուկ և հետևողական, քան իրենց արևմտահայ համախոհները:

Ազատամիտների խոսափող Կ. Պոլսի «Մասիս» թերթը հանդես է եկել ոչ թուրք հանրությունների նկատմամբ թուրք տարրի կարծեցյալ մտավոր գերազանցության մասին պատկերացումների հերքումով: «Մասիսը» առարկում էր նաև Ֆուադ փաշայի այն դատողություններին, որտեղ այս վերջինը անհնարին էր համարում Թուրքիայում երեսփոխանական ժողովի կայացման հնարավորությունը: Եթե Ֆուադ փաշան, որպես խանգարիչ գործոն փաստարկում էր այլահավատ հպատակների ցեղային, դավանական, մտավոր տարբերություններն ու հակասությունները, ապա «Մասիսը» դրան հակադրում էր նրանց քաղաքակրթական բարձր մակարդակը: Թերթը համակրում էր նաև Թուրքիայում սահմանադրական կարգերի անցնելու գաղափարը: Օսմանյան սահմանադրությունից ազատամիտներն ակնկալում էին քաղաքացիական, կրոնական ազատություններ, հարստահարությունների վերացում, վարչական ու տնտեսական բարեփոխումներ: «Մասիսն» ընդարձակ լրատվություն էր տալիս օսմանյան խորհրդարանի գործունեության, հատկապես հայ երեսփոխանների ելույթների վերաբերյալ, լուսաբանում էր քրդերի կողմից հայերի հայտարարությունների խնդիրը, քրդերի կապերը օսմանյան իշխանությունների հետ և օսմանյան պետական քաղաքականությունը («հիքմեթի հյուլքյումեթ») քրդերի ձեռքով հայերին ջլատելու, քայքայելու նպատակադրությամբ: Այս

ամենով հանդերձ, «Մասիսը» հավատում էր, որ թուրքիան կարող է բարեփոխվել եվրոպական արժեքների ոգով ու դրանց ներգործության շնորհիվ:

Օսմանիզմի դրույթների դիպուկ քննադատությամբ է հանդես եկել Յ. Պարոնյանը «Թատրոն» պարբերականի էջերում: Նա ծանակել է «օսմանցիության» և թուրքերեն լեզվի առավելության քարոզչությունը և թուրքիայի մռայլ անցյալը գունազարդելու «նոր օսմանների» ճիգերը: Պարոնյանը թերհավատությամբ ու հեզմանքով էր վերաբերվում թուրքիայի սահմանադրվելուն և օսմանյան սահմանադրությունը ներկայացնում էր իբրև քաղաքական խաբեության միջոց:

«Մշակում» գր. Արծրունին քննադատական կտրուկ հայեցակետից է անդրադառնում «նոր օսմանների» քարոզչությանը: «Մշակը» գտնում էր, որ «նոր օսմանները», մեծապետական ձևակերպումների մեջ անտեսում են հպատակ ազգերի կենսական շահերը: «Մշակը» հատկապես ուշադրություն է դարձրել «նոր օսմանների» հեղինդուկ պատկերացումներին, որպիսիք եվրոպական պառլամենտարիզմի և շարիաթի սկզբունքների անհեռանկար խառնուրդ էր համարում:

Օսմանյան թուրքիայի բարեկարգման սեփական պատկերացումներով հանդես է եկել պահպանողական «Փորձը»: Չնայած «Փորձն» առարկում էր «նոր օսմանների» շովինիստական դիրքորոշմանը հպատակ ազգերի նկատմամբ, այնուամենայնիվ հավատում էր թուրքիայում բարեկարգումներ մտցնելուն և սահմանադրություն կիրառելուն: Պարբերականը նույնիսկ բարեկարգումները դնում էր Արևելյան հարցի լուծման հիմքում:

1870-ական թթ. 2-րդ կեսին քրիստոնյա հպատակների ինքնորոշման տրամադրություններն Օսմանյան կայսրությունում ավելի ակտիվացան: Սրան զուգահեռ իրենց քաղաքական ակտիվությունը թուրքիայի նկատմամբ մեծացրին նաև Ռուսաստանը և եվրոպական տերությունները: Օսմանյան կայսրությունը մտավ ներքին ու արտաքին խոր ճգնաժամի մեջ: Արդյունքում գահ բարձրացավ Աբդուլ Համիդը (1876 թ. օգոստոսի 31), որը, պայմանավորվածության համաձայն, պետք է ընդուներ սահմանադրություն:

1876 թ. դեկտեմբերի 23-ին հռչակվեց օսմանյան առաջին սահմանադրությունը: Խորհրդարանում մի կողմից դրսևորվեցին ընդդիմադիր, մյուս կողմից՝ պահպանողական մեծապետական դիրքորոշումներ:

Խորհրդարանի երկրորդ նստաշրջանում 1878 թ. հունվարի 28-ին, հայ երեսփոխանները (թվով՝ 13 մարդ) քննարկման ներկայացրին գավառական հարստահարությունների հարցը: Ռազմաճակատում կրած պարտություններն ու զուգահեռաբար ուժեղացող խորհրդարանական ընդդիմության առկայությունն ստիպեցին սուլթանին փոփոխություններ մտցնել կառավարության կազմում, ապա արձակել խորհրդարանը (1878 թ. փետրվարի 14-ին՝ սուլթանի բացառիկ իրավունքի գործադրման հետևանքով, սահմանադրության 113 հոդված):

Սակայն «Մասիսը», «Թատրոնը», հունական, թուրքական և հայկական այլ թերթեր շարունակեցին իրենց քննադատական լրատվությունը ապօրինությունների և չարաշահումների դեմ: Արդյունքում, տարբեր պատճառներով, աքսորվեցին «նոր օսմանների» մի շարք առաջատար ներկայացուցիչներ, տարբեր ժամանակով խափանվեցին թերթեր:

Արևմտահայ և արևելահայ հատվածներում հրատարակվող թերթերից յուրաքանչյուրը օսմանյան բարենորոգչական շարժումը գնահատել է ազգի գոյատևման ու առաջընթացի վերաբերյալ իր հասարակական ուղղությանը հատուկ պատկերացումներից ելնելով: Այստեղից՝ անխուսափելի այն

տարամիտումները, որ դրսևորվեցին պահպանողական և ազատամիտ մամուլում թանգհիմաթի բարեկարգումների (1839–1850-ականների սկիզբ), հաթթը հյունայունի (1856), արևնտահայ ազգային սահմանադրության, «նոր օսմանների» գաղափարախոսության և օսմանյան առաջին սահմանադրության նկատմամբ:

Թեկնածուական ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում

1. 1860–1870-ական թվականների օսմանյան սահմանադրական շարժումը և արևնտահայ մամուլը, Պատմագիտական հետազոտություններ (Գիտական հոդվածների ժողովածու), ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, ՎՊՄԻ-ի պատմության ամբիոն, Վանաձոր, 2001, էջ 68–77:

2. Արևնտահայ պարբերական մամուլը և թուրքական իրականությունը (1860–1870-ական թթ.), Բանբեր, № 1, (Գիտական աշխատություններ), ՀՀ ԿԳ նախարարություն, ՎՊՄԻ, Վանաձոր, 2006, էջ 136–141:

3. Արևնտահայ պարբերական մամուլի իրավական կացության պատմությունից (1860–1870-ական թթ.), Լրաբեր հասարակական գիտությունների, Երևան, 2006, № 3, էջ 198–207:

4. Օսմանյան Թուրքիայի համայնքների կանոնադրությունների շուրջ, Պատմաբանասիրական հանդես, Երևան, 2011, № 2, էջ 131–141:

5. Թանգհիմաթի երկու փուլերը Օսմանյան Թուրքիայում, Գիտական հոդվածներ (Պատմագիտություն), ՀՀ ԿԳ նախարարություն, ՎՊՄԻ, Վանաձոր, 2011, էջ 195–203:

Чатинян Геворг Енокович

АРМЯНСКАЯ ОБЩЕСТВЕННАЯ МЫСЛЬ ОБ ОСМАНСКОМ
РЕФОРМАТОРСКОМ ДВИЖЕНИИ (1839-1876)

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по специальности 07.00.01. “История Армении”

Защита состоится 12-го мая 2015 г., в 14⁰⁰ на заседании специализированного совета по Истории Армении 004 ВАК РА при Институте Истории НАН РА (0019, Ереван, пр. Маршала Баграмяна 24/4).

РЕЗЮМЕ

Диссертация посвящена оценке реформаторского движения, начавшегося в половине XIX века в Османской империи, со стороны армянской общественной мысли. Начиная с 40-ых гг. XIX века армянская общественная мысль и периодическая пресса, выражавшая ее подходы, обращалась к османскому реформаторскому движению и оценке идеологии “новых османов”, исходя из национального и правового положения западных армян. Армянская общественная мысль негативно относилась к стремлениям “новых османов” по сохранению целостности Османской империи и к перспективе иметь однородное мусульманское сообщество.

В исследовании представлены позиции общественной мысли, отраженные в армянской периодике 50-70-ых гг. XIX века относительно османского реформаторского движения и по-научному им даны оценки.

Диссертация состоит из введения, трех глав, заключения, списка использованной литературы и источников.

Во Введении обосновываются научное значение, цели и задачи темы, методология диссертации, научная новизна и практическое значение, временные границы темы, представлен обзор использованных источников и литературы.

В первой главе диссертации – “Реформы в Османской Турции”, представлена необходимость реформ в Османской Турции, два этапа – содержательный и временной, танзимата, попытки государства перенять европейскую модель реформ.

Представлены также разномнения армянской церкви и интеллигенции.

Во второй главе – “Взгляды новых османов”, представлены разные реформаторские мероприятия и стремления “новых османов” по направлению преобразования империи в конституционную монархию. Показана также навязчивая идея “Новых османов” по сохранению целостности империи и точка зрения принуждения мысли о превосходстве турок относительно подданных иноверных с применением конституционных принципов.

В третьей главе – “Оценка “новых османов” в армянской действительности” анализируется отношение армянской общественной мысли к движению “новых османов”, их идеологии и османской первой конституции с точки зрения консерваторов и либералов. Либералы выявляли регрессивный характер идеологии “новых османов” и в основном не верили конституционности Османской Турции, а консерваторы связывали надежды с реформами и с усилиями применения конституции.

Дается также оценка османской конституции, которая нашла свое отражение на страницах западноармянской и восточноармянской периодической прессы. Либералы первую османскую конституцию считали искусственной и результатом только политических целей, что не связывалось с сущностью и внутренними закономерностями развития Османской империи. При этом делается вывод, что указанная точка зрения более четко и последовательно изложена в подходах восточноармянских либералов. Позиция их западноармянских идеологических сторонников в этом вопросе более чем сдержанная и умеренная. В свою очередь, консерваторы в обеих частях проявляли более однотипную и идентичную идеологию, считая возможным применение конституции и благоустройство Турции.

По этой причине они первую османскую конституцию оценивали в качестве положительного и передового шага.

CHATINYAN GEVORG

ARMENIAN PUBLIC IDEOLOGY ABOUT OTTOMAN REFORMIST MOVEMENT (1839-1876)

Dissertation for the degree of the Doctor of History on the specialization
of "History of Armenia" 07.00.01.

The defense of the dissertation will be held on May 12, 2015, 14⁰⁰ at the session of the Specialized Council 004 on Armenian History of SQC RA by the Institute of History of the National Academy of Sciences of RA (0019, Yerevan, Marshal Baghramyan ave. 24/4).

SUMMARY

The dissertation devotes to evolution of Armenian public idea about the Ottoman reformist movement which began in the middle of 19th c. Armenian public ideology and periodicals referred to Ottoman reforms and “Neo Ottomans” idealism since 40-ies of 19th c. taking into the consideration the Western Armenians’ national and lawful conditions. The “Neo Ottomans” looked forward to save the territorial integrity of Ottoman empire with homogeneous Islamic population but Armenian public ideology had the negative reference.

The Armenian public positions in periodicals of 19th c. 50-70-ies concerned to Ottoman reforms.

The dissertation consists of introduction, three chapters, conclusion and the bibliography.

The theme is scientifically grounded in the introduction. Here is given the aims and problems, the methodology of dissertation, scientific news and the practical meaning as well.

The first chapter is entiteled “The reforms in Ottoman Turkey”. Here is shown the necessity of reforms, the main points and two stages of tanzimat and the using of European reforms by the government. Here is shown the disagreement of Armenian church and the intellectuals to reforms as well.

The second chapter entiteled “Neo Ottomans’ view”. Here is shown different arrangements wich concerned with reforms and “Neo Ottomans” aspirations for changing the emppair into costitutional moarchy. They wanted to save the teritorial intergrity and to bent the heterodoxes.

The third chapter ia entiteled “Armenians’ attitudes to “Neo Ottomans” in reality. Here is analysed the conservatives and free-things attituds of Armenian public ideas about Neo Ottomans ideology and the first costitution. The rectionary character of “Neo Ottomans” was brought out by free-things. They didn’t belive to Ottoman Turkey constitution. The coservatives looked forward for using the reforms and constitution.

There were notes in Westen and Easten Armenian periodics about the Ottoman constitution. The free-things thought that the first constitution was artifical and didn’t conect with the development of Ottoman emire. Eastern Armenian free-things were clearly expressed this in their views. Western Armenians were more temperance. The conservatives showed more monotonous views in both parts and preferd the Turkish costitution.